# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
ք. Մարալիկ, Մադաթյան փ. 1, հեռ. 0242- 2-22-37, ani.shirak@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ N 66-Ա

<<30>> մայիսի 2024 թվական քաղաք Մարալիկ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՄԱՐԱԼԻԿ ՔԱՂԱՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՍԱՀՄԱՆՆԵՐՈՒՄ ԳՏՆՎՈՂ, ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍՈՒՄ ՔԱՂԱՔԱՑԻ՝ ԱՐՄԱՆ ՌՈՒԲԵՆԻ ՏԻՏՈՅԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ, ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉՎԱԾ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՄԱՐՎԱԾ ԲՆԱԿԵԼԻ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՏՆԱԿԻ ՕԺԱՆԴԱԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՆՐԱ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՀՈՂԱՄԱՍԸ ԳՆՄԱՆ ՆԱԽԱՊԱՏՎՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ, ՈՒՂՂԱԿԻ ՎԱՃԱՌՔՈՎ ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՂԻՆ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդված 1-ին մասի 21-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված «Ինքնակամ կառույցների օրինականացման և տնօրինման կարգի» 39-րդ կետի դրույթներով, հիմք ընդունելով Հաշվառման /չափագրման/ տվյալների մուտքագրման տեղեկանքը, տրված՝ 2023-11-16 ծածկագիր՝ 2023VWGRFR, հաշվի առնելով, որ ինքնակամ շինությունն իրականացրած քաղաքացի Արման Ռուբենի Տիտոյանը, իր 2023 թվականի դեկտեմբերի 1-ի դիմումով ընդունել է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով օրինական ճանաչված և Անի համայնքի սեփականությունը համարված **37.81** քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի օժանդակ ավտոտնակի շինությունը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության, բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0034-0039 կադաստրային ծածկագրով **0,003781** հեկտար մակերեսով հողամասի (Վկայական 22042024-08-014, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց 15/8 ավտոտնակ) ուղղակի վաճառքով գնման նախապատվության իրավունքը.

**Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին որոշում է**

1. Համայնքի ղեկավարի առաջարկությամբ, տալ համաձայնություն՝ օրինական ճանաչված և համայնքի սեփականությունը համարված **37.81** քառակուսի մետր արտաքին մակերեսով բնակելի նշանակության ավտոտնակի օժանդակ շինությունը և նրա պահպանման ու սպասարկման համար նախատեսված Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրերի նպատակային նշանակության,

բնակելի կառուցապատման գործառնական նշանակության 08-003-0034-0039 կադաստրային ծածկագրով **0,003781** հեկտար մակերեսով հողամասը (Վկայական 22042024-08-0014, անշարժ գույքի հասցեն՝ մարզ Շիրակի, Անի համայնք, քաղաք Մարալիկ, Մադաթյան փողոց 15/8 ավտոտնակ) գնման նախապատվության իրավունքով, ուղղակի վաճառքով **68 815 (ութսունութ հազար ութ հարյուր տասնհինգ) Հայաստանի Հանրապետության դրամ** ընդհանուր արժեքով վաճառել կառուցապատողին, քաղաքացի՝ Արման Ռուբենի Տիտոյանին /Նույնականացման քարտ 2903800022, տրված՝ 11.04.2017թ, 022-ի կողմից, հաշվառման հասցե՝ մարզ Շիրակ, Անի համայնք, ք. Մարալիկ, Մադաթյան փողոց շենք 15, բն. 23):

2. Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ղեկավար՝ Ա. Սարիբեկյանին.

Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով քաղաքացու հետ կնքել անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիր և ապահովել սույն որոշումից բխող իրավունքների պետական գրանցումը՝ քաղաքացու միջոցներով:

3. Որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ**

| | Կողմ- 11 | Դեմ – 0 | Ձեռնպահ – 0 |
|---|---|---|---|
| **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ** | ---------- | ---------- | ---------- |
| **Է. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ** | ---------- | ---------- | ---------- |
| **Ռ. ԱՐՇԱԿՅԱՆ** | ---------- | ---------- | ---------- |
| **Է. ՈՒՌՈՒՏՅԱՆ** | ---------- | ---------- | ---------- |
| **Ա. ՇԱԲՈՅԱՆ** | ---------- | ---------- | ---------- |
| **Հ. ՋԱՏԻԿՅԱՆ** | ---------- | ---------- | ---------- |
| **Ժ. ԱԼԵՔՅԱՆ** | ---------- | ---------- | ---------- |
| **Գ. ԱՂԱԲԵԿՅԱՆ** | ---------- | ---------- | ---------- |
| **Ն. ՍԱՐՈՅԱՆ** | ---------- | ---------- | ---------- |
| **Գ. ԹԱԹԵՎՈՍՅԱՆ** | ---------- | ---------- | ---------- |
| **Մ. ԵՆՈՔՅԱՆ** | ---------- | ---------- | ---------- |

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ** **Ա. ՍԱՐԻԲԵԿՅԱՆ**

<<30>> մայիսի 2024 թ.
քաղաք Մարալիկ